**Արձանագրություն N 2-2**

**ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-26/2 ծածկագրով «Գետերի վրա կամուրջների, կարգավորիչ պատերի հիդրոլոգիական հաշվարկներ» ՀՀ կանոնների հավաքածուի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

16.07.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Բոյաջյան |
| | Գ. Ծատուրյան |
| | Ա. Չավուշյան |
| | Ս. Թորոսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլայան |

**1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության և դրա շտկման մասին**

---

(Ա. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանության մասին 14.07.2026թ. ծանուցվել է գնման ընթացակարգի մասնակից «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

**2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**

---

(Ա. Գևորգյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

**3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին**

---

(Ա. Գևորգյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Գևորգյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________________ Ա. Գևորգյան

Անդամներ՝ ______________________ Ա. Բոյաջյան

______________________ Գ. Ծատուրյան

______________________ Ա. Չավուշյան

______________________ Ս. Թորոսյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ ______________________ Ն. Նիկոլայան